ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

Նյութը պատրաստեց Էրիկ նալբանդյանը
Դասարան 10-2

- Հայաստանում աղբահանության ոլորտի կարգավորման հարցում բացակայում է համակարգային մոտեցում: Աղբը շարունակվում է կուտակվել, այնինչ վերամշակման և տեսակավորման քաղաքականության ներդրման հարցում չկան տեսանելի արդյունքներ: Այս մասին «Մեդիա կենտրոնում» անցկացված «Աղբահանության խնդիրները Հայաստանում» թեմայով քննարկմանը հայտարարեցին բնապահպանները և խնդրով մտահոգ փորձագետները:

- Քննարկման մասնակից Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության ղեկավար Անահիտ Բախշյանի կարծիքով մայրաքաղաքում աղբահանության խնդիրը համակարգային լուծման կարիք ունի: «Մինչև հիմա տրվել են տեղային լուծումներ, չկա համակարգային մոտեցում: Օրինակ՝ Նուբարաշենում աղբը կուտակվել է, թափվել է հեղեղատարի վրա, որի հետևանքով (տեղումների ժամանակ) տարածքն է հեղեղվում: Այս պատկերը կարելի է տեսնել շատ վայրերում», – նշեց Բախշյանը՝ հավելելով, որ քաղաքապետարանում հաճախ է խոսվում խնդրի մասին, սակայն էական արդյունք չկա: Նրա համոզմամբ, աղբահանության ոլորտի կարգավորման հարցում պետք չէ միայն ապավինել պետական գերատեսչություններին:

- «Խնդրի լուծման հարցում ակտիվ մասնակցություն պետք է ունենան նաև քաղաքացիները, օրինակ՝ չկեղտոտեն քաղաքը: Հաճախ ենք նկատում, որ մարդիկ անգամ աղբամանների առկայության պարագայում չեն օգտվում դրանցից և կեղտոտում են շրջակա միջավայրը», – հավելեց «Բարև Երևան» խմբակցության ղեկավարը՝ միևնույն ժամանակ կոչ անելով Երևանի բնակիչներին ապրիլի 18-ին «Armenia Tree Project»-ի հետ միասին մաքրել Հրազդանի կիրճը:

- «Մեդիա կենտրոնում» ապրիլի 13-ին անցկացվեց քննարկում՝ նվիրված աղբահանության խնդրին: Քննարկման բանախոսներն էին «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ Ինգա Զարաֆյանը, Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության ղեկավար Անահիտ Բախշյանը, Գրին Բին սրճարանի համահիմնադիր Իրինա Ղափլանյանը, Հայաստանի ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոնի տնօրեն Ալեն Ամիրխանյանը, արվեստագետ Արամազդ Քալաջյան և “Էյ Թի Փի” ԲՀ հայաստանյան գրասենյակի ղեկավար Լուսինե Քասարջյանը:

- «Մենք ուզում ենք առաջարկել աղբահանության խնդրի լուծման ոչ ստանդարտ լուծումներ», – հայտարարեց «Էյ Թի Փի» Բարեգործական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Լուսինե Քասարջյանը: Այժմ Հայաստանում տեղի է ունենում ուղղակի աղբի հեռացում, այն է՝ կուտակում: «Հայաստան ծառատունկ» ծրագիրը առաջարկում է առաջնորդվել աղբահանության ոլորտի կառավարման արդյունավետ մոդելով: «Մենք առաջարկում ենք այլ լուծումներ՝ վերամշակելու և վերարտադրելու: Ցավոք Հայաստանում աղբի հեռացման միակ եղանակը, աղբի կուտակումն է», – նշեց Լուսինե Քասարջյանը:

- Գրին Բին սրճարանի համահիմնադիր Իրինա Ղափլանյանը կարևորեց մասնավոր հատվածի ներգրավման հարցը խնդրի կարգավորմանը: «Այս հարցում ամենակարևորը իրազեկումն է, թե ինչպիսի հետևանքներ կարող են ունենալ աղբի կուտակումները: Իրազեկման խնդրի լուծման համար անհրաժեշտ է հասարակական զովազդ: Զարգացած երկրներում խնդրի լուծմանը կայուն զարգացման փիլիսոփայությամբ մասնակցում են ոչ միայն ՀԿ-ները, այլև բիզնեսը», – ասաց բանախոսը:

- Հայաստանի ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոնի տնօրեն Ալեն Ամիրխանյանը նկատեց, որ ՀՀ-ում մարդիկ սահմանված նորմերից ավել աղբ չեն արտադրում, սակայն բաց է մնում է ոլորտի կառավարման խնդիրը: «Մ՝եր հիմնական խնդիրը ոլորտի կառավարումն է ու աղբի տեսակավորումը», – նշեց Ամիրխանյանը՝ նկատելով, որ Երևանում աղբահանության խնդիրը դանդաղ լուծվում է, սակայն տեսանելի քայլեր չեն ձեռնարկվում վերմշակման համակարգի ներդրման ուղղությամբ: «Հաճախ Երևանում նկատում ենք կուտակված աղբի այրում, որը կարող է անգամ առողջական խնդիրներ հարուցել», – հավելեց նա:

- «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ Ինգա Զարաֆյանը շարունակեց ոլորտի կառավարման թեման՝ մատնացույց անելով կոնկրետ օրինակներ: «Մենք չենք լուծել աղբի կառավարման հարցը, քանի որ Նուբարաշենի աղբավայրում կան թունավոր արտանետումներ, օրինակ՝ դիոքսին գազ», – ասաց նա՝ հիշեցնելով նաև Սևանա լճում առկա խնդիրների մասին: Ժամանակին խնդիր է դրվել, որպեսզի Սևանա լիճի ավազանում ագրելվի պլաստիկ շշերի ներմուծումը, սակայն ապարդյուն: «Այժմ մենք Սևանում ունենք Պլաստիկ թափոնների մեծ քանակություն: Ժամանակին ֆրանսահայ հետազոտողների մի խումբ Սևանի հատակը ուսումնասիրելու արդյունքում հայտնաբերեց պլաստիկ շշերի թափոնների մեծ քանակություն: Սևանի հատակը սկսել է փակվել, և այնտեղ ձուկ ու խեցգետին չի կարող ապրել, ինչը մեծ հարված է լճի էկոհամակարգին», – հայտարարեց Զարաֆյանը:

- Աղբահանության ոլորտի թերացումների պատճառով, նշում է բնապահպանը, պլաստիկ շշերի կուտակումներ են առաջ եկել նաև գյուղերում: «Եթե 20 տարի առաջ այս խնդիրը գյուղերում չկար, և կենցաղային աղբը բնական եղանակով վերամշակվում էր, ապա հիմա իրավիճակը գրեթե նույնն է, ինչ Երևանում», – նկատեց բանախոսը:
- Քննարկման ավարտին բանախոսները համաձայնեցին, որ աղբի կառավարման խնդիրների բարելավումից բացի, աղբահանության ոլորտում իրավիճակի շտկմանը ակտիվ մասնակցություն պետք է ունենան նաև հասարակ քաղաքացիները, ՀԿ-ները և գործարար համայնքը: